


ԳԵՎՈՐԳ ԲԱՐՂԱԿՉՅԱՆ. ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ԱՎԱՆԴՆԵՐԻ ՈՒ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԶՈՒԳՈՐԴՈՂՈՐԸ
(Ծննդյան 80-ամյակի առթիվ)*



Լրացավ ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Գևորգ Պարզեի Բարդակչյանի ծննդյան 80-ամյակը:

Ծնվել է 1942 թ. Բեյրութում: 1964-1969 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում, ապա 1970-1974 թթ.՝ Օքսֆորդի համալսարանում:

1974-1987 թթ. դասախոսել է Հարվարդի համալսարանում: 1987 թ., երբ հիմնվում է Միչիգանի համալսարանի Մարի Մանուկյանի անվան հայոց լեզվի և գրականության ամբիոնը, վարիչ է հրավիրվում Գ. Բարդակչյանը: 1995-2007 թթ. եղել է համալսարանի հայագիտական ծրագրերի տնօրենը:

Օքսֆորդի համալսարանում 1978 թ. դոկտորական է պաշտպանել «Հակոբ Պարոնյանի քաղաքական և սոցիալական երգիծանքը» թեմայով: Աշխատանքը թարգմանվել է թուրքերեն:

ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ է ընտրվել 2011 թ. դեկտեմբերի 28-ին: Հիմնադրել և ղեկավարել է Միչիգանի համալսարանի ամառային հայկական ինստիտուտը 1988-2009 թթ., որի դասընթացներին մասնակցել են աշխարհի տարբեր երկրներից:

Եղել է «Հայագիտական ուսումնասիրությունների ընկերակցության» (Society for Armenian Studies) գործադիր խորհրդի անդամ ու ընկերակցության նախագահ 1982-1984 և 2010-2014 թվականներին, նաև՝ ԱՄՆ «Վարդանանց ասպետներ» հայագիտական հանձնախմբի նախագահ՝ 2012-2017 թթ.: Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում լույս տեսնող շուրջ մեկ տասնյակ պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է:

Տարիների ընթացքում կազմակերպել է բազմաթիվ միջազգային գիտաժողովներ, որոնք վերաբերվել են հայագիտության տարբեր հարցերին: Մի քանի տասնյակ դասախոսություններ է կարդացել տարբեր երկրներում (Սինգապուրում, Հնդկաստանում, Իսպանիայում, Եգիպտոսում, Սանկտ Պետերբուրգում) և տարբեր լեզուներով (հայերեն, անգլերեն, արաբերեն, ֆրանսերեն և թուրքերեն):

Նրա գիտահասարակական գործունեությունը բարձր է գնահատվել Հայաստանի Հանրապետության, Սփյուռքի և միջազգային տարբեր կառույցների

* Ներկայացվել է 24. VI. 2022 թ., ընդունվել է տպագրության 30. VI. 2022 թ.:

կողմից: 1984 թ. արժանացել է «Ջ. Հ. Քոլիգյան» (ԱՄՆ), 2000 թ. «Ա. Հ. Դադյան» (Նյու Յորք) մրցանակների, Ամերիկյան մշակույթին բերած նպաստի համար 2011 թ. պարգևատրվել է Էլիս կղզու պատվո մեդալով:

Երևանի պետական համալսարանը 2005 թ., իսկ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը 2011 թ. նրան շնորհել են Պատվավոր դոկտորի կոչում:

Բավականին լայն է Բարդակչյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ հայ միջնադարյան գրականության բնագրերից մինչև նոր շրջանի հայ գրականություն և ուշ միջնադարից մինչև նոր շրջանի պատմություն և մշակույթն ընդգրկող հարցեր:

Նա իր կարևոր նպաստն է բերել Հայոց ցեղասպանության ուսումնասիրությանը՝ կազմակերպելով տարբեր գիտաժողովներ և կատարելով մի քանի կարևոր աշխատանքներ: Երբ հիմնվում է Հոլոքոստի ոգեկոչման թանգարանը, տնօրինությունը 1984 թ. Բարդակչյանին է դիմում գրելու հայկական ցեղասպանության խորհրդապահական ուրվագիծը: Հավաքված նյութերը մի քանի տարի անց ներկայացնում է նաև Թեդ Պողոսյանի նկարահանած «Ճանապարհորդություն հայկական շափիղներով» (An Armenian Journey) ֆիլմում:

«Հիտլերը և հայերի ցեղասպանությունը. Հիտլերի ճառը 1939 թ. օգոստոսի 22-ին» գրքում լրացուցիչ փաստարկներ է բերում հօգուտ այն տեսության, որ Հիտլերը, ծրագրելով հրեաների զանգվածային ոչնչացումը իրականացնել, որպես նախատիպ նկատի է ունեցել Օսմանյան կայսրությունում ու Արևմտյան Հայաստանում կատարված Հայոց ցեղասպանությունը՝ որպես անպատիժ մնացած հանցագործության օրինակ: Գիրքը նախ լույս է տեսել անգլերեն, ապա երկիցս հայերեն՝ Երևանում և թրքերեն՝ Իստամբուլում:

Գիտական գործունեության և Սիյուսքում հայապահպանությանը ծառայելու բնորոշ օրինակ են արևելահայերենին ու արևմտահայերենին նվիրված նրա դասագիրք-ուղեցույցները, որոնք կիրառվում են ԱՄՆ-ում և արտերկրի մի շարք այլ համալսարաններում:

Ուշ միջնադարյան և նոր շրջանի գրականության բնագավառում նրա տասնամյակների հետազոտությունների հանրագումարն է հայ գրականության 1500–1920 թթ. ընդգրկող մատենագիտությունը. «Հայ նոր գրականության ուղեցույց. 1500–1920 թթ., ներածական պատմությամբ» (A Reference Guide to Modern Armenian Literature 1500-1920, with an introductory history): Այն տպագրվել է 2000 թ.: Նախ հայ գրականության համառոտ պատմություն է ներկայացվում ժամանակի պատմամշակութային համապատկերում: Հաջորդ բաժնում բերվում են այս շրջանում ստեղծագործած հեղինակների մասին 10–15 տող ընդգրկող համառոտ կենսագրականներ և տեղեկություններ, ապա նրանց գործերի մատենագիտությունը հայերենով և այլ շուրջ տաս լեզուներով թարգմանված: Առանձին բաժիններով ներկայացվում են հայ գրականության մեջ այս երկայն ժամանակաշրջանին վերաբերող գրական-քննադատական, բանասիրական ուսումնասիրությունները, գրողների երկերի բնագրերի թարգմանական ժողովածուները, հայ գրականության տաղաչափություն, հայ բանահյուսությունը, գրական փոխազդեցություններին նվիրված ուսումնասիրությունները և աշուղական գրականությունը, մատենա-

գիտական և տեղեկատվական հավաքածուները: Ընդհանուր առմամբ, բերվում է այս ժամանակաշրջանն ընդգրկող մոտ 400 հեղինակների կյանքի և ստեղծագործությունների մատենագիտությունը: Անհրաժեշտ նյութերը և մատենագիտական տեղեկությունները գտնելուն օգնում է խնամքով և մանրամասն կազմված անձնանունների ցանկը:

Միջազգային «Բրիլ» հեղինակավոր հրատարակչությունը 2014 թ. տպագրում է Գ. Բարդակչյանի և Ս. Լա Պորտայի կազմած «Հայ Հայտնությունական ավանդույթը. համեմատական հեռանկարներ» (The Armenian Apocalyptic Tradition: a comparative perspective, Brill, SVTP series) ժողովածուն: Աշխատանքում տեղ են գտել ոչ միայն «Հովհաննու Հայտնության», այլև ընդհանրապես վախճանաբանական գրականության հետ կապված բնագրերը և վերջիններիս վերաբերող ուսումնասիրությունները: Գ. Բարդակչյանի կողմից այն կարևոր միտքն է ընդգծվում, որ ընդհանուր քրիստոնեական բնույթի հայտնությունական բնագրերը, հայկական միջավայրում տեղայնացվելով, կապվել են հայության ապագայի հետ՝ անհատների փոխարեն վերաբերվելով հայ ժողովրդի ապագային: Ավելին, նույն այս ընթացքով հայկական միջավայրում ստեղծված մի շարք տեսիլներ, գուշակություններ և անեծքներ ձեռք են բերել վախճանաբանական բնույթ՝ որպես տարատեսակ դրսևորումները հայ միջնադարյան ազատագրական լեզենդի: Նման մոտեցմամբ են քննվում Դանիելի յոթերորդ տեսիլի հետագա կենցաղավարումը հայկական միջավայրում, հայ գրականության մաս կազմող «Դաշանց թուղթը», Ներսես Մեծի և Կոզեռնի տեսիլները:

Գ. Բարդակչյանի ծննդյան 75-ամյակի առթիվ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտն անգլերենից հայերեն թարգմանությամբ «Պատմաբանասիրական հոդվածներ» խորագրի ներքո տպագրեց նրա գիտական գործերից ծավալուն յոթ հոդված, որոնք ոչ միայն ներկայացնում են հեղինակի գիտական հետաքրքրությունների շրջանակը, այլև լավագույնս պատկերացում տալիս հետազոտություններում կիրառված գիտական-քննադատական քննության եղանակի մասին: Հոդվածները նվիրված են հայագիտության ամենաբազմազան հարցերին՝ միջնադարյան գրականությունից մինչև XVII–XVIII դդ. հասարակական-քաղաքական խնդիրները, եվրոպական ուղեգրողների Հայաստանի մասին հայտնած կարծիքները: Լուսատիա նմանահանությամբ տպագրվում է նաև Գ. Բարդակչյանի Հակոբ Պարոնյանի այլաբանական երկերին նվիրված ուսումնասիրությունը:

Գրքում տեղ գտած հոդվածները, գրված լինելով հայկական և օտար սկզբնաղբյուրների ընդգրկմամբ, ընդլայնում են մի շարք կարևոր հարցերի վերաբերյալ ավանդական տեսակետների շրջանակը: Բնորոշելով այս հոդվածները՝ կարող ենք ասել, որ միջնադարից մինչև XIX դարի հայ կյանքի տարբեր իրողությունները վերլուծվել են հայոց լեզվի, հայ գրականության ու հայ ժողովրդի պատմության համադրական քննությամբ և այս քննությունն իր հերթին դիտարկված է Արևելք–Արևմուտք գուգահեռների համատեքստում՝ իսլամական բանաստեղծությունից մինչև եվրոպական վերածնություն և XVIII–XIX դդ. գրական-գեղագիտական ուղղություններն ու ըմբռնումները: Գրքում տպագրված հոդվածները հավասարապես վերաբերում են թե՛ գրականագիտությանը, թե՛ պատմագիտությանն ու միջգիտակարգային վերլուծություն-

ների լավագույն օրինակ են և բերված են ըստ իրենց պարունակած թեմաների ժամանակագրական ընթացքի՝ սկսվելով հայոց տարաբախտ Արշակ երկրորդ թագավորով, որի կերպարի երկվորյունն ու միասնական, կենտրոնացված պետություն և պետականություն ստեղծելու բուռն տենչն ու միջնադարից մինչև Լևոն Խեչոյան մեկնաբանությունն է վերլուծված Բարդակչյանի կողմից:

Հայ հին գրականության մի շարք ստեղծագործությունների բնագրագիտական և բառաքննական ուսումնասիրություններ է կատարում ժամանակի իրավաբաղադական, ինչպես նաև այդ բառերի արևելյան լեզուներում ունեցած իմաստների հաշվառմամբ: Բառագիտական նման ճշգրտումները օգնում են ճիշտ հասկանալու Կոստանդին Երզնկացու տարբեր ստեղծագործությունների և մի շարք հայրենների տարբեր տողերի իմաստները: Երզնկացու օրինակով վերլուծվում է հայ բանաստեղծության մեջ Սուրբ Հոգու միջոցով Աստվածատուր շնորհից մինչև մոսկան ու շնորհատու և մուրազատու Սուրբ Կարապետ բանաստեղծներին տրվող շնորհի մեկնաբանումը:

Հաջորդ երկու հոդվածները սերտորեն կապված են իրար հետ՝ վերաբերվելով Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքությունն ու արևմտահայության կյանքում մի տեական ժամանակ թեպաղբող դիրք գրավող հայ ամիրաներին: Այս հոդվածներում պատմագիտական ճշտումները կատարվում են հայ գրականության սկզբնաղբյուրային նյութերի հիման վրա: Ցույց է տրվում, որ Պոլսի պատրիարքությունը համայն արևմտահայության առաջնորդի դերը նվաճեց հայ ժողովրդի պատմական անցյալի, լեզվի ու հավատի միասնության շնորհիվ, և ոչ թե օսմանյան կայսերական հրովարտակով:

Մխիթարյաններին նվիրված հոդվածի էջերում ցույց է տրվում Մխիթարի առաքելության բուռն նպատակը և միաբանության բերած նպաստը հայագիտությանն ու հայ մշակույթի տարբեր ոլորտներին:

Հայաստանի և հայ ժողովրդի կերպարի եվրոպական ընկալմանն է նվիրված անգլիացի ուղեգրողների Հայաստանի մասին հոդվածը:

Այս ժողովածուի մեջ տեղ է գտել նաև 1980 թ. տպագրված «Յակոբ Պարոնեանի աշխատանքի կարգ մը երկերուն պատմական դէմքերն ու դէպքերը» աշխատությունը: Հ. Պարոնյանի երգիծանքի մի շարք աշխատանքային պատմությունների կերպարների բացահայտմանը վերաբերող այս աշխատանքում կատարված է իրապես ոսկերչական աշխատանք և 1880-ական թվականների բանավոր պատմությունների ու ժամանակի մամուլի կենցաղային և առօրեական բնույթի ծանուցումների ու լուրերի, ինչպես նաև Ազգային ժողովի նիստերում տեղի ունեցող անցուղարձերի միջոցով ցույց է տրվում, թե ովքեր են Պարոնյանի մի շարք կենդանական և դիցաբանական հերոսների իրական նախատիպերը: Պարոնյանի գործերը մի կողմից ժամանակի պոլսահայ միջավայրի համատեքստում են դիտարկվում, իսկ զեղարվեստական առանձնահատկությունների առումով էլ համեմատվում են Փրանսիական գրականության հետ:

Այսպես համառոտ փորձելով ուրվագծել Գ. Բարդակչյանի անցած գիտական ուղին՝ կրժվարանանք ասել, թե նա որքանով է սիյուռաֆայ ու օտար միջավայրի հայազետ և որքանով՝ հայաստանյան: Նման տարբերակի փոխարեն ճիշտ կլինի ասել, որ նա Մերձավոր Արևելքի հայկական նոր ավանդույթներ ու հոծ զանգվածներ ունեցող միջավայրում ձևավորված, ապա Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում կրթված

յուն ստացած և այնուհետև Օքսֆորդում հետագա ուսումնառությունն անցած, աշխարհի հայագիտության տարբեր կենտրոններում պատասխանատու դերակատարություն ստանձնած, շարունակաբար հայրենի երկրի կենսատու միջավայրի ուժին հաղորդված և Մատենադարանի ձեռագրային գանձերն ամբարած հայագետ է: Այսպիսով, նա Սփյուռքի փորձառությունը կրող, հայրենի կրթություն ստացած ու Արևմտյան գիտական մեթոդաբանությունը քաջածանոթ հայրենի սփյուռքահայ «բազմավեպ» հայագետ է, որին շատ դժվար է պատմաբանի, գրականագետի, մշակութաբանի կամ լեզվաբանի կադավարով սահմանել-սահմանափակել:

Այս իրողությունը հատկապես աչքի է զարնում նրա ուսումնառություններում, ուր բուն պատմաբանասիրական քննությունը հաճախ ընդմիջարկվում է արևմտահայ միջավայրի ավանդույթների մինչև իրեն հասած փորձառությամբ, ուր գիտական քննությանն է միահյուսվում մանկության տարիների և սփյուռքյան վարժարաններում ուսումնառության վերհուշը: Հայկական աղբյուրներից ու այդ վերհուշից եկող անվանումները որպես տեղ-միջավայրի հասկացություններ են քննվում լեզվաբանական տեսանկյունից և վեր հանվում հիշյալ բառերի պարունակած իրավաքաղաքական ու տնտեսական իմաստները:

Հայաստանի, Սփյուռքի, ինչպես նաև օտար հայագետների մի զգալի մասը իրենց գիտական մկրտությունը ստացել են Մատենադարանի ընթերցասրահում, ուր նրանք ներկայանում են գիտական հանրությունը և ծանոթանում միմյանց հետ: Երբ ես 1981 թ. առաջին անգամ բախտ ունեցա լինելու Մատենադարանի ընթերցասրահում, Գ. Բարդակչյանը տարիներ առաջ էր այստեղ ստացել իր գիտական մկրտությունը և գիտության ու իմացության սանդուղքներով ելնում էր վեր:

Խորհրդային տարիներին, սկսած իրենց արտաքինից ու պահվածքից թեև հստակորեն տարբերվում էին արտասահմանցիները, այդ թվում և սփյուռքահայերը՝ Բարդակչյանի դեպքում չնայած նկատելի էր արևմտյան աշխարհին պատկանելը, բայց նա նկատելիորեն տարբերվում էր մյուսներից ու ասես «մերը» լինելը իր պահվածքով և խոսվածքի շեշտված արևելահայերենով:

Անցնող տասնամյակները, հավելելով նրա գիտական իմացությունը, բարեբախտաբար, քիչ բան են տարել նրանից: Էյի նույն ժպտուն և վառվռուն հայացքը, եռանդով նորանոր գործեր ձեռնարկելը և նույն եռանդով իր գիտական ըմբռնումներն ու տեսակետները պաշտպանելը:

Ծննդյան 80-ամյակը բոլորած Գևորգ Բարդակչյանին մաղթենք քաջառողջություն, երջանկություն և որ նորանոր ուսումնասիրություններով հարստացնի հայագիտության որքան հերկված, նույնքան և հերկվելիք Անդա-տանը:

ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Բ. գ. դ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն: Գիտական հետաքրքրությունը՝ հայ միջնադարյան գրականություն: Հեղինակ է 37 մենագրության և շուրջ 120 հոդվածի: devrikyan@yahoo.com